

Մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Արևիսի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի դասվար /9.75 դասաժամ/, հայոց լեզվի և գրականության /5 դասաժամ/, պատմության /4 դասաժամ/, հանրահաշիվ, երկերաչափություն /5 դասաժամ/, ֆիզկուլտուրա /4.5 դասաժամ/, ռուսաց լեզու /4.75 դասաժամ/, անգլերեն /3,5 դասաժամ/, ֆիզիկա /2 դասաժամ/, աշխարհագրություն /2 դասաժամ/, ինֆորմատիկա /1 դասաժամ/, կերպարվեստ /0.75 դասաժամ/, տեխնոլոգիա /3.5 դասաժամ/, երգ /2 դասաժամ/, ռուսուցչի թափուր տեղերի համար: Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև գինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են հոկտեմբերի 12-ից մինչև հոկտեմբերի 25-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 16:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2022 թ հոկտեմբերի 31-ին՝ ժամը 14:00-ին**, ՀՀ Սյունիքի մարզի Արևիսի հիմնական դպրոցում, հասցե՝ գ. Արևիս, փողոց 1, 2.12: Տեղեկությունների համար զանգահարել 094374753 հեռախոսահամարով: